

Բանալի բառեր՝ արժույթային միություն, միասնական արժույթ, վճարային համակարգ, ֆինանսական շուկա, արժույթային ռիսկ:

ՀՏԴ 336.7

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Միսակ ԱՎԱԳՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
տնտեսագիտության ամբիոնի դասախոս*

Կերչին շրջանում շատ են խոսակցություններն ու քննարկումները ԵԱՏՄ շրջանակներում արժույթային միություն ստեղծելու և միասնական արժույթի ներդրման մասին: Բնական է, որ ցանկացած ինտեգրացիոն խմբավորման ձևավորումը ենթադրում է ինտեգրման բոլոր դասական փուլերով նախատեսված միությունների ստեղծում և դրանցից առավելագույն տնտեսական օգուտի ստացում: Իսկ դրան այն է, որ տնտեսական ինտեգրման նպատակով կազմավորված ոչ բոլոր միավորումներն ունեն ներուժ ու հնարավորություն՝ անցնելու այդ գործընթացի բոլոր փուլերով և հասնելու դրա բարձրագույն փուլին՝ արժույթային միությանը:

Յետխորհրդային տարածաշրջանում երկրների արժույթային քաղաքականության կոորդինացման մասին դրույթներ սահմանված են եղել դեռևս ԱՊՀ կանոնադրության մեջ, 24.09.1993թ. ԱՊՀ անդամ պետությունների (բացի Ուկրաինայից) միջև ստորագրված «Տնտեսական միության ստեղծման մասին» պայմանագրում, 06.01.1995թ. կնքված «Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության միջև Մաքսային միության մասին» համաձայնագրում, որին հետագայում միացավ նաև Ղազախստանը, 26.02.1999թ. Բելառուսի, Ղազախստանի, Ղրղըզստանի, Ռուսաստանի ու Տաջիկստանի միջև կնքված «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի մասին» պայմանագրում, 19.09.2003թ. Բելառուսի, Ղազախստանի, Ռուսաստանի և Ուկրաինայի կողմից ստորագրված «Միասնական տնտեսական տարածքի ձևավորման մասին» համաձայնագրում: Նշված բոլոր փաստաթղթերում սահմանվել են արժույթային քաղաքականության ազատականացման, համաձայնեցման (կոորդինացման), արժույթային կարգավորման և վերահսկողության վերաբերյալ նույնաբովանդակ դրույթներ՝ բացառությամբ 1993թ. կնքված «Տնտեսական միության ստեղծման մասին» պայմանագրի, որտեղ խոսք էր գնում փուլային եղանակով, այդ թվում՝ արժույթային (դրամական) միության ձևավորման ճանապարհով ինտեգրման խորացման անհրաժեշտության մասին: Այնուամենայնիվ, այդ բոլոր պայմանագրերը մնացին թղթի վրա և գործնականում իրականություն չդարձան:

Հատկանշական է, որ 29.05.2014թ. կնքված «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրում նույնպես արժույթային միության ձևավորման վերաբերյալ որևէ դրույթ առկա չէ: Պայմանագրի 14-րդ բաժնում միայն սահմանված է, որ ԵԱՏՄ անդամ պետությունները մշակում և իրականացնում են համաձայնեցված արժույթային քաղաքականություն, որը պետք է հիմնվի հետևյալ սկզբունքների վրա՝

- արժույթային քաղաքականության ձևավորման և իրականացման նկատմամբ մոտեցումների փոփոխությունները պետք է ստեղծվեն և մոտարկվեն այն ծավալով, որքանով դա համապատասխանում է ինտեգրացիոն համագործակցության ձևավորված մակրոտնտեսական պահանջներին,

- ազգային և միջպետական մակարդակներում անհրաժեշտ կազմակերպատիրական պայմանների ստեղծում՝ արժույթային ոլորտում ինտեգրացիոն գործընթացների զարգացման, արժույթային քաղաքականության համակարգման և համաձայնեցման նպատակով,

- արժույթային ոլորտում այնպիսի գործողությունների չեղարկում, որոնք կարող են բացասական կերպով ազդել ինտեգրացիոն գործընթացների զարգացման վրա, իսկ դրանք ստիպված ձեռնարկելու դեպքում՝ այդպիսի գործողությունների հետևանքների նվազեցում,

- անդամ պետությունների ազգային արժույթների նկատմամբ վստահությունը բարձրացնելուն ուղղված տնտեսական քաղաքականության իրականացում՝ ինչպես յուրաքանչյուր անդամ պետության ներքին արժույթային շուկայում, այնպես էլ միջազգային արժույթային շուկաներում¹:

Այնուհայտ է, որ ԵԱՏՄ շրջանակներում երկրների ինտեգրման գործընթացները դեռևս չեն հասել զարգացման այնպիսի մակարդակի, որ հնարավոր լինի մտածել մոտ ապագայում արժույթային միության ձևավորման և միասնական արժույթի

¹ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր, Հոդված 64, [Էլեկտրոնային ռեսուրս]՝ արդյուրը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95272> (մուտքի ամսաթիվ՝ 01.08.2017թ.)

ներդրման անհրաժեշտության մասին: Ներկա փուլում արժույթային միության ձևավորման դեռևս վաղաժամ լինելը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դրանք են.

1. ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսությունների անհամաչափ զարգացումը,
2. տնտեսական կայուն աճի բացակայությունը,
3. ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի ոչ լիակատար ազատությունը,
4. սոցիալական զարգացման ցածր և դանդաղ աճի տեմպերը,
5. Ռուսաստանի նկատմամբ շարունակվող միջազգային տնտեսական պատժամիջոցների կիրառմամբ պայմանավորված հնարավոր տնտեսական ճգնաժամների առաջացման և տարածման վտանգը,
6. պետությունների քաղաքական կամքի բացակայությունը:

Ինչպես վկայում է Եվրոպական արժույթային միության զարգացման փորձը, միայն ինտեգրման բարձր մակարդակը և ազգային տնտեսական համակարգերի միահյուսումը կարող է նպաստել լիարժեք արժույթային միության ձևավորմանը: Այս գործընթացի հաջողության համար կարևոր է նաև թույլ զարգացած շրջանների աջակցման ուղղված վերազգային հիմնադրամների ստեղծումը, որի միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործումը հնարավորություն կտա անդամ երկրների առավել հետամնաց շրջաններում խթանել տնտեսական ակտիվությունը, նվազեցնել գործազրկության մակարդակը, ստեղծել արտահանմանն ուղղված համալիրներ, ինչն էլ, իր հերթին, կնպաստի առկա ինտեգրացիոն գործընթացներին այդ շրջանների մասնակցության աճին և ներտարածաշրջանային ինտեգրման մակարդակի բարձրացմանը:

ԵԱՏՄ երկրների սոցիալ-տնտեսական զարգացման աճի տարբեր միտումների մասին է վկայում այն հանգամանքը, որ այդ երկրները միմյանցից էականորեն տարբերվում են ոչ միայն տնտեսական զարգացման տեմպերը բնութագրող ՀՆԱ-ի աճի և բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակով, այլև բնակչության կենսամակարդակը բնութագրող գործազրկության մակարդակով և նույնիսկ միջին ամսական անվանական աշխատավարձի չափերով: Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, ԵԱՏՄ ոչ բոլոր երկրներում է վերջին տարիներին գրանցվել տնտեսական աճ: Այսպես, եթե 2012-2014թթ. ընթացքում անդամ բոլոր երկրներում ՀՆԱ-ի աճի ինդեքսը նախորդ տարիների համեմատ արձանագրել է հավելած, ապա 2015 և 2016 թվականներին Ռուսաստանում և Բելառուսում այն նվազել է՝ 2016թ. կազմելով համապատասխանաբար 99.8 և 97.4%: Ավելին, միջինացված հաշվարկով ԵԱՏՄ-ում ևս 2015-2016թթ. ընթացքում ՀՆԱ-ի աճ չի գրանցվել: Տնտեսական զարգացման անհամաչափության մասին է վկայում նաև բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը. եթե այս ցուցանիշը 2016թ. Ռուսաստանում կազմել է 8,769 ԱՄՆ դոլլար, ապա Դրոլդգատանում՝ 1,078 ԱՄՆ դոլլար՝ ավելի քան 8 անգամ պակաս Ռուսաստանի համապատասխան ցուցանիշից:

Գրեթե նույն պատկերն է նաև բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների առումով: Այսպես, գործազրկության ամենաբարձր մակարդակը մշտապես ունեցել է Հայաստանը՝ 2016թ. կազմելով 18.3%, ինչը մոտ 3.7 անգամ բարձր է Ղազախստանի գործազրկության մակարդակից (2016թ.՝ 5.0%): Ինչ վերաբերում է միջին ամսական անվանական աշխատավարձին, ապա այս ցուցանիշով ևս տարբերությունը զգալի է. եթե Ռուսաստանում 2016թ. այն կազմել է 549 ԱՄՆ դոլլար, ապա Դրոլդգատանում՝ մոտ 2.7 անգամ ցածր (207 ԱՄՆ դոլլար):

Աղյուսակ 1-ում նշված սոցիալ-տնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզ է դառնում, որ զարգացման առավել կայուն տեմպեր ունեն Ղազախստանն ու Ռուսաստանը, իսկ առավել ցածր տեմպեր՝ Դրոլդգատանը:

Միասնական եվրոպական արժույթի ներդրմանն առնչվող խնդիրներից մեկն էլ այն է, որ ԵԱՏՄ երկրներում ազգային արժույթից հրաժարումն ու նոր՝ միասնական արժույթի ընդունումը պայմանավորված է նաև հոգեբանական գործոնով: Բանն այն է, որ սովորաբար ազգերը հոգեբանորեն պատրաստ չեն տարիներ և նույնիսկ դարեր շարունակ գործածվող ազգային արժույթը, որը երբեմն արտացոլում է նաև տվյալ պետության պատմությունը, մշակութային արժեքները և նույնիսկ անկախությունը, փոխարինել նոր արժույթով՝ երբեմն այն դիտարկելով որպես ազգային ինքնիշխանության մասնակի կորուստ: Նշվածն առավել սուր է արտահայտվում, երբ ազգային արժույթը փոխարինվում է ոչ թե բոլորովին նոր միասնական արժույթով, այլ արժույթային միության մեկ այլ անդամ պետության գործող արժույթով: Այս խնդիրը մտահոգիչ էր նույնիսկ ԵՄ-ում, երբ նոր արժույթային գոտու ստեղծման շուրջ միության անդամ երկրների միջև տեղի ունեցող բանակցությունների ընթացքում քննարկվում էր գերմանական մարկը կամ ֆրանսիական ֆրանկը որպես միասնական արժույթ ընդունելու վերաբերյալ հարցը: Այս առումով, հեռահար ապագայում, երբ ԵԱՏՄ անդամ պետությունները տնտեսապես պատրաստ կլինեն ներդնելու միասնական արժույթ, կարծում ենք, որ պետք է կիրառել ԵՄ փորձը և ներմուծել նոր արժույթ՝ նոր անվանումով, այլ ոչ թե ընդունել ԵԱՏՄ անդամ այս կամ այն պետության արժույթը՝ որպես միասնական արժույթային միավոր: Ընդ որում, հասարակական դժգոհություններից խուսափելու նպատակով նախատեսվել է միասնական արժույթի ներդրման հարցի վերաբերյալ որոշումը կայացնել ժողովրդավարական եղանակով՝ հանրաքվեի միջոցով:

ԵԱՏՄ տարածքում արժույթային միության ձևավորման վերաբերյալ առաջ են քաշվում տարբեր տեսակետներ և կարծիքներ, որոնք, ընդհանուր առմամբ, հանգում են փուլային եղանակով արժույթային միության ստեղծմանը: Այսպես, տնտեսագիտության դոկտոր Վ.Ս. Կուզնեցովի կարծիքով, ԵԱՏՄ-ի ստեղծումն ինքնըստինքյան օրակարգ է մտցրել եվրասիական հաշվարկային, արժույթային և վարկային հարաբերությունների կայուն կառուցվածքի ձևավորման հարցը: Ըստ Նրա, որպեսզի ԵԱՏՄ անդամ երկրների ռեզիդենտների միջև հաշվարկային հարաբերությունները նպաստեն փոխադարձ առևտրի, արժույթային, վարկային և այլ ֆինանսական հարաբերությունների զարգացմանը, անհրաժեշտ է ստեղծել արդյունավետ վճարային համակարգ, որը կնախատեսի ազգային արժույթների լայնորեն կիրառում, ինչն էլ, իր հերթին, կհանգեցնի հաշվարկների գծով ծախսերի տնտեսմանը: Այդ նպատակով տնտեսագետն առաջարկում է օգտագործել Եվրոպական արժույթային համակարգի փորձը և որպես միասնական հաշվարկային միավոր ներդնել եվրասիական արժույթային միավորը (EACU²)՝ որպես բազմակողմանի արժույթային քլիրինգի հաշվարկային միավոր և եվրասիական արժույթային համակարգի ամրակցման արժույթ: Արժույթային պարիտետի շեղումների դեպքում EACU-ի արժույթային փոխարժեքի կոշտ ֆիքսումը ԵԱՏՄ անդամ երկրների ազգային արժույթների նկատմամբ, ինչպես նաև շուկայական փոխարժեքի տատանումների սահմանը կարելի է ամրապնդել ճկունության տարրերի ներմուծմամբ, քանի որ, ի տարբերություն Եվրոպական արժույթային համակարգի գործողության պատմական ժամանակահատվածի, ներկայում համաշխարհային տնտեսության մեջ առկա է այլ իրավիճակ, ինչպիսիք են տնտեսությունների բացության բարձր մակարդակը, երկրների կողմից արտաքին հատվածում իրականացվող արժույթաֆինանսական քաղաքականության ոլորտների ընդլայնումը, լողացող արժույթային փոխարժեքների լայնորեն կիրառումը, համաշխարհային ֆինանսական շուկայի ծավալների մեծացումը, կապիտալի անդրսահմանային շարժի ընդլայնումը: Կուզնեցովն առաջարկում է նաև երկրների արժույթային քաղաքականության կորդինացման նպատակով ձևավորել առանձին մարմին, որի կազմի մեջ կմտնեն ԵԱՏՄ անդամ

² Eurasian currency unit

պետությունների ազգային կենտրոնական բանկերի ղեկավարները: Յեղիսակը, այնուամենայնիվ, նշում է, որ միասնական եվրասիական արժույթային միավորի ներմուծումը, որը ԵԱՏՄ երկրների միջև փոխադարձ առևտրում պետք է կատարի ոչ միայն արժույթային փոխարժեքի (ամրակցված արժույթի), այլև հաշվարկային և վճարային միավորի գործառույթ, չի ենթադրում երկրների ազգային արժույթային ինքնիշխանության բացառում և ազգային արժույթներից հրաժարում, այլ ընդամենը նախատեսում է ազգային արժույթների ամրակցում EACU-ի նկատմամբ՝ կոշտ ֆիքսված փոխարժեքի օգնությամբ, իսկ EACU-ի միջոցով՝ ազգային արժույթի փոխարժեքի սահմանում ԵԱՏՄ անդամ այլ պետությունների արժույթների նկատմամբ՝ այնպես, ինչպես գործում էր Եվրոպական արժույթային համակարգում: Առաջարկվում է նաև ԱՄՆ դոլլարից և եվրոյից կախվածության թուլացման ուղի, ըստ որի՝ եթե Եվրոպական արժույթային համակարգում Արժույթային համագործակցության եվրոպական հիմնադրամի կողմից էթյուի էմիսիան ապահովվում էր անդամ պետությունների կողմից ոսկու և ԱՄՆ դոլլարի վճարմամբ, ապա եվրասիական տարածաշրջանային արժույթային համակարգում EACU-ի էմիսիան պետք է ապահովվի ոչ թե ԱՄՆ դոլլարով և եվրոյով, այլ ոսկով և այլ կայուն արժույթներով³:

Աղյուսակ 1 .
ԵԱՏՄ սոցիալ-տնտեսական մի շարք ցուցանիշներ 2012-2016թթ. ընթացքում⁴

Երկրներ / տարիներ	2012	2013	2014	2015	2016
ՉՆԱ-ի աճի ինդեքս (%)					
Չայաստան	107.2	103.3	103.6	103.0	100.2
Բելառուս	101.7	101.0	101.7	96.2	97.4
Ղազախստան	104.8	106.0	104.2	101.2	101.0
Ղրղրզստան	99.9	110.9	104.0	103.9	103.8
Ռուսաստան	103.5	101.3	100.7	97.2	99.8
ԵԱՏՄ	103.6	101.8	101.1	97.7	99.8
Բնակչության մեկ շնչին ընկնող ՉՆԱ (ԱՄՆ դոլլար)					
Չայաստան	3,512	3,680	3,852	3,504	3,525
Բելառուս	6,913	7,898	8,289	5,829	4,964
Ղազախստան	12,387	13,891	12,807	10,510	7,509
Ղրղրզստան	1,234	1,342	1,338	1,171	1,078
Ռուսաստան	15,042	15,552	14,278	9,372	8,769
ԵԱՏՄ	13,728	14,331	13,235	8,931	8,115
Գործազրկության մակարդակ (%)					
Չայաստան	17.3	16.2	17.6	18.5	18.3
Բելառուս	-	-	-	-	5.8
Ղազախստան	5.3	5.2	5.0	5.0	5.0
Ղրղրզստան	8.4	8.3	8.0	7.6	-
Ռուսաստան	5.5	5.5	5.2	5.6	5.5
ԵԱՏՄ	5.7	5.6	5.4	5.7	5.7
Միջին ամսական անվանական աշխատավարձ (ԱՄՆ դոլլար)					
Չայաստան	282	358	381	359	393
Բելառուս	439	564	590	413	361
Ղազախստան	679	717	675	568	416
Ղրղրզստան	228	234	229	209	207
Ռուսաստան	857	936	856	561	549
ԵԱՏՄ	857	936	856	561	549

Եվրասիական միասնական արժույթի ձևավորման հեռանկարի մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Տնտեսության և ֆինանսական բաղաբանության հարցերով Կոլեգիայի նախկին անդամ (Նախարար) Թ.Մ. Սուլեյմանովի կարծիքով, «ԵԱՏՄ-ում միասնական արժույթի ներմուծման հարցն, առաջին հերթին, բաղաբանական է: Ազգային արժույթը հավասարազոր է պետական դրոշին, զինանշանին կամ հիմնին և երկրի ինքնիշխանության խորհրդանիշներից մեկն է: Եվ դրանից հրաժարվելու համար անհրաժեշտ է ծանրակշիռ պատճառ, հասարակական գիտակցության պատրաստվածություն: Անհրաժեշտ է տևական ժամանակ, որպեսզի սերտ համագործակցության արդյունքում ազգերը պատրաստ լինեն մոռանալու տենգեի, ռուբլու կամ դրամի մասին»⁵:

Արժույթային միության ձևավորման մասին պարբերաբար իրենց կարծիքներն են արտահայտել նաև ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարները: Յետաբերբական է, որ մինչ ԵԱՏՄ-ի ձևավորումը ԵվրԱզԵ-ի շրջանակներում միասնական արժույթի ներմուծման անհրաժեշտության մասին հայտարարություններով առավել շատ հանդես է եկել Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը՝ նույնիսկ 2003թ. առաջարկելով ապագա միասնական արժույթն անվանել «ալթըն», իսկ հետագայում՝ 2009թ. առաջ քաշելով նոր անվանում՝ «եվրագ»: Ի տարբերություն Ն. Նազարբաևի՝ Բելառուսի նախագահ Ա. Լուկաշենկոն 2011թ. առաջարկել է փոխադարձ հաշվարկներն իրականացնել ռուսական ռուբլով, քանի որ ԵվրԱզԵ-ի անդամ երկրներից համեմատաբար առավել կայուն արժույթն ունի Ռուսաստանը: Մինչդեռ Ռուսաստանի գործող և նախկին նախագահները միասնական արժույթի և դրա անվանման վերաբերյալ որևէ կոնկրետ առաջարկով հանդես չեն եկել՝ այն

³ Кузнецов В.С., Валютный союз-Будущее ЕАЭС, Вестник МГИМО-Университета, № 2 (41), М.: МГИМО, 2015, с. 171-177 [Էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.vestnik.mgimo.ru/sites/default/files/pdf/018_ekonomika_kuznecovs.pdf (մուտքի ամսաթիվ՝ 06.08.2017թ.)

⁴ Աղյուսակը կազմվել է «Евразийский экономический союз в цифрах: краткий статистический сборник», М.: Евразийская экономическая комиссия, 2017, с. 17, 53, 81 տվյալների հիման վրա

⁵ Зубков И., Гражданин Евразии, Российская газета. Столичный выпуск. 23.12.2014. С. 6. [Էլեկտրոնային ռեսուրս]՝ <https://rg.ru/2014/12/23/suleimanov.html> (մուտքի ամսաթիվ՝ 06.08.2017թ.)

հիմնավորմամբ, որ այդ հարցերը դեռևս չեն կարող լինել բանակցությունների առարկա, քանի որ միասնական արժույթի ներմուծումը հանդիսանում է ինտեգրման գործընթացների գազաթնակետը, որին հասնելու համար ԵԱՏՄ-ն դեռ երկար ճանապարհ պետք է անցնի: ԵԱՏՄ անդամ բոլոր պետությունների կենտրոնական բանկերի նախագահները նույնպես հայտարարել են, որ առնվազն մինչև 2025թ. միասնական արժույթի ներդրման մասին խոսք լինել չի կարող:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ ներկա փուլում Եվրոպական արժույթային համակարգի փորձի ճշգրիտ կիրառումը Եվրասիական տարածաշրջանում այդքան էլ հիմնավորված չէ, քանի որ Եվրոպական արժույթային համակարգի ստեղծման և միասնական արժույթի՝ Եվրոյի ներմուծման օբյեկտիվ անհրաժեշտությունն ինքնաբերաբար բխել է այն պարզ իրողությունից, որ ԵՄ երկրներում փոխադարձ առևտրաշրջանառությունն ու ներդրումները մշտապես գտնվել են բարձր մակարդակի վրա, ինչն էլ պայմանավորել է Եվրոպական միասնական վճարահաշվարկային համակարգի ստեղծման նպատակահարմարությունը: Այս տեսանկյունից, միանշանակ պետք է նշել, որ Եվրասիական արժույթային միության ձևավորումը կարող է տեղի ունենալ միայն ԵԱՏՄ անդամ պետությունների միջև տնտեսական բազմոլորտ համագործակցության մակարդակի բարձրացման, ինչպես նաև ապրանքների, ծառայությունների և կապիտալի փոխադարձ շարժերի ծավալների ընդլայնման դեպքում՝ այն հասցնելով ընդհուպ մինչև (60-70)%-ի, այսինքն՝ այն ժամանակ, երբ արդեն հնարավոր կլինի փաստել ԵԱՏՄ-ում տնտեսական ինտեգրացիոն իրական և խոր գործընթացների ծավալման մասին:

Միասնական արժույթի ներդրման համար կարևոր նշանակություն ունի նաև այն չափանիշների (կոնվերգենցիաների) սահմանումը, որոնք պետք է խստորեն պահպանեն արժույթային միության անդամ երկրները: ԵՄ-ում այդպիսի չափանիշներ սահմանվել են 07.02.1992թ. կնքված Մասստրիխտյան համաձայնագրով, որոնք հիմք են հանդիսացել ստեղծվելիք ԵՄ տնտեսական և արժույթային միության երկրներին ընտրելու համար: Հատկանշական է, որ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով ևս սահմանվել են նման չափորոշիչներ, սակայն դրանք հանդիսանում են ոչ թե ապագայում արժույթային միության անդամակցության, այլ ընդամենը տնտեսական զարգացման կայունությունը որոշող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ: Աղյուսակ 2-ից երևում է, որ Մասստրիխտյան համաձայնագրով սահմանված կոնվերգենցիայի չափանիշների թիվը կազմում է հինգ, մինչդեռ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով դրանք ընդամենը երեքն են: Ընդ որում, Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության առավել խիստ չափանիշ է սահմանված ԵԱՏՄ երկրների (առավելագույնը՝ 50%), իսկ գնաճի առավել խիստ չափանիշ՝ ԵՄ երկրների (առավելագույնը 1.5%-ով բարձր՝ գնաճի ամենացածր մակարդակ ունեցող երեք երկրների միջինից) համար (թեև գնաճին վերաբերող ԵՄ և ԵԱՏՄ չափանիշները միմյանցից կառուցվածքային առումով տարբեր են):

Աղյուսակ 2 . ԵՄ և ԵԱՏՄ հիմնական մակրոտնտեսական չափանիշները

	ԵՄ չափանիշներ⁶		ԵԱՏՄ չափանիշներ⁷
1	Պետական բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը	1	Պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի տարեկան պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը
2	Պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 60%-ը	2	Պետական կառավարման հատվածի պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50%-ը
3	Գնաճի մակարդակը չպետք է գերազանցի 1.5 տոկոսով այն անդամ երեք երկրների գնաճի միջին մակարդակը, որոնք ունեն գնաճի ամենալավ (ամենացածր) ցուցանիշը	3	Գնաճի մակարդակը (սպառողական գների ինդեքսը) տարեկան արտահայտությամբ (դեֆլատները նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, տոկոսներով) ավելի, քան 5 տոկոսային կետով չպետք է գերազանցի գնաճի մակարդակն այն անդամ պետությունում, որտեղ այդ ցուցանիշն ունի ամենափոքր արժեքը
4	Երկարաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույթը չպետք է գերազանցի 2 տոկոսային կետով այն անդամ երեք երկրների տոկոսադրույթների միջին մակարդակը, որոնք ունեն գնաճի ամենալավ (ամենացածր) ցուցանիշը		
5	Եվրոյի նկատմամբ անդամ երկրների արտարժույթային փոխարժեքների տատանումների առավելագույն սահմանը պետք է պահպանվի +/- 15 տոկոսի շրջակայքում		

Վիճակագրական տվյալները փաստում են, որ ԵԱՏՄ բոլոր անդամ պետությունները այդ միության կողմից սահմանված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներից առնվազն մեկի գծով ունեն շեղում թույլատրելի մակարդակից (տես՝ աղյուսակ 3): Այսպես, Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության թույլատրելի շեղումը 2016թ. խախտվել է Հայաստանի (-3.4%), Ղազախստանի (-4.6%) և Ղրղզստանի (-3.4%) կողմից, ընդ որում՝ Հայաստանն այն խախտում է սկսած ԵԱՏՄ-ին անդամակցության տարվանից: Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության առավելագույն սահմանը խախտվել է Հայաստանի (56.7%) և Ղրղզստանի (61.5%), իսկ սպառողական գների ինդեքսը՝ Բելառուսի (111.8%) և Ղազախստանի (114.6%) կողմից: Ի դեպ, Բելառուսի սպառողական գների ինդեքսը 2012-2016թթ. ընթացքում մշտապես գերազանցել է թույլատրելի շեղումը:

Արժույթային միության ձևավորման գործընթացի հաջողության համար խիստ կարևոր է համապատասխան միջոցառումների պլանի մշակումը, դրա իրականացման ժամանակացույցի սահմանումը և ճշգրիտ կատարումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՏՄ շրջանակներում դեռևս խնդիր է դրված ոչ թե ձևավորել արժույթային միություն, այլ

⁶ The Treaty on the Functioning of the European Union (Article 140) [Էլեկտրոնային ռեսուրս]՝ աղբյուրը՝ <http://www.profbrugger.at/kartell/Texte/TFEU.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 13.08.2017թ.)
⁷ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր, Հոդված 63, [Էլեկտրոնային ռեսուրս]՝ աղբյուրը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95272> (մուտքի ամսաթիվ՝ 01.08.2017թ.)

իրականացնել համաձայնեցված (կորորդինացված) արժույթային քաղաքականություն, ուստի՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով սահմանվել են համաձայնեցված արժույթային քաղաքականության իրականացմանն ուղղված անդամ պետությունների կողմից ձեռնարկվելիք միջոցառումները, որոնցից են ազգային արժույթների փոխարժեքի քաղաքականության համակարգումը, անդամ պետությունների ազգային արժույթների փոխադարձ ուղղակի գնանշումների ապահովման համար պայմանների ստեղծումը, անդամ պետությունների ռեզիդենտների միջև ազգային արժույթներով փոխադարձ հաշվարկների իրականացման ապահովումը, անդամ պետությունների միջև վճարահաշվարկային հարաբերությունների մեխանիզմի կատարելագործումը, ազգային արժույթի պաշտոնական փոխարժեքների բազմակիության բացառումը, բորսայական շուկայում ձևավորված փոխարժեքների կամ ԱՄՆ դոլլարի նկատմամբ ազգային արժույթների կրոս կուրսերի հիման վրա ազգային (կենտրոնական) բանկերի կողմից ազգային արժույթների պաշտոնական փոխարժեքների սահմանումը, անդամ պետությունների ինտեգրված արժույթային շուկայի ձևավորումը, ներքին արժույթային շուկայի հասանելիության ապահովումը, ածանցյալ ֆինանսական գործիքների կազմակերպված շուկայի զարգացումը և այլն:

**Աղյուսակ 3.
ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական զարգացման կայունությունը որոշող
հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2012-2016թթ. ընթացքում⁸**

Երկրներ / տարիներ	2012	2013	2014	2015	2016
Պետական բյուջեի պակասուրդը (հավելուրդը) ՀՆԱ-ի նկատմամբ (%)					
Հայաստան	-1.4	-1.6	-1.9	-4.8	-3.4
Բելառուս	-0.1	-0.3	0.7	1.7	1.1
Ղազախստան	-2.9	-2.0	-2.7	-2.2	-1.6
Ղրղրզստան	-6.5	-0.8	-0.5	-1.5	-4.6
Ռուսաստան	-0.1	-0.5	-0.4	-2.4	-3.4
Կոմվերգենցիայի շեմը					
ըստ ԵՄ չափանիշի	3.0	3.0	3.0	3.0	3.0
ըստ ԵԱՏՄ չափանիշի	3.0	3.0	3.0	3.0	3.0
Պետական պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ (%)					
Հայաստան	44.1	40.8	43.7	48.8	56.7
Բելառուս	24.3	23.7	24.5	36.5	39.2
Ղազախստան	12.3	12.3	14.3	22.1	25.0
Ղրղրզստան	50.5	47.1	53.6	67.1	61.5
Ռուսաստան	7.9	8.3	10.1	10.3	9.9
Կոմվերգենցիայի շեմը					
ըստ ԵՄ չափանիշի	60.0	60.0	60.0	60.0	60.0
ըստ ԵԱՏՄ չափանիշի	50.0	50.0	50.0	50.0	50.0
Սպառողական գների ինդեքս (%)					
Հայաստան	102.6	105.8	103.0	103.7	98.6
Բելառուս	159.2	118.3	118.1	113.5	111.8
Ղազախստան	105.1	105.8	106.7	106.6	114.6
Ղրղրզստան	102.8	106.6	107.5	106.5	100.4
Ռուսաստան	105.1	106.8	107.8	115.5	107.1
Կոմվերգենցիայի շեմը⁹					
ըստ ԵՄ չափանիշի	109.6	105.0	107.6	107.2	107.1
ըստ ԵԱՏՄ չափանիշի	112.7	107.6	110.8	108.0	108.7

Չնայած ԵԱՏՄ-ում համաձայնեցված արժույթային քաղաքականության ապահովմանն ուղղված միջոցառումներից մեկը հանդիսանում է անդամ պետությունների ռեզիդենտների կողմից անդամ պետությունների բանկերի միջոցով առանց սահմանափակումների արտարժույթի առթի ու վաճառքի հնարավորության համար պայմաններ ստեղծելու միջոցով վճարային հաշվեկշիռի ընթացիկ և կապիտալ հաշիվների գծով ազգային արժույթների՝ առանց սահմանափակումների փոխարկելիության ապահովումը, այնուամենայնիվ, յուրաքանչյուր անդամ պետություն բացառիկ դեպքերում (եթե իրավիճակը չի կարող կարգավորվել տնտեսական քաղաքականության այլ միջոցառումներով) իրավասու է սահմանել արժույթային սահմանափակումներ՝ մեկ տարուց ոչ ավելի ժամկետով: Բացառիկ դեպքեր են դասվում՝

- այնպիսի հանգամանքների առաջացումը, որոնց դեպքում ազատականացմանն ուղղված միջոցառումների իրականացումը կարող է վստիքարացնել անդամ պետության տնտեսական և ֆինանսական վիճակը,

⁸ Աղյուսակը կազմվել է «Евразийский экономический союз в цифрах: краткий статистический сборник», М.: Евразийская экономическая комиссия, 2017, с. 47, 53, 173, 182 տվյալների հիման վրա
⁹ Սպառողական գների ինդեքսի կոմվերգենցիայի շեմերը հաշվարկվել են հեղինակի կողմից՝ աղյուսակ 3-ի տվյալների հիման վրա

• վճարային հաշվեկշռի վիճակի բացասական զարգացումը, որի հետևանքով անդամ պետության ոսկու և արծույթի պահուստները կարող են նվազել թույլատրելի մակարդակից,

• այնպիսի հանգամանքների առաջացումը, որոնց դեպքում ազատականացման ուղղված միջոցառումների իրականացումը կարող է վնաս հասցնել անդամ պետության անվտանգության շահերին և խոչընդոտել հասարակական կարգի պահպանումը,

• անդամ պետության ազգային արծույթի փոխարժեքի կտրուկ տատանումները¹⁰

Լշենք, սակայն, որ գոյություն ունի ԵԱՏՄ որևէ փաստաթուղթ, որտեղ սահմանված լինեն վերոնշյալ միջոցառումների իրականացման համար կոնկրետ ժամկետներ: Ելնելով անդամ երկրների միջև արժույթաֆինանսական քաղաքականության բազմաթիվ հարցերի շուրջ առկա տարբեր մոտեցումներից՝ կարելի է ենթադրել, որ նշված միջոցառումների անցկացման համար կպահանջվի մեծ ջանքեր և բավականին երկար ժամանակ, ինչը նկատելիորեն կդանդաղեցնի տարածաշրջանային ինտեգրման գործընթացները: «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրում նշվում է միայն, որ անդամ պետությունները պարտավոր են մինչև 2025թ. իրականացնել ֆինանսական շուկայի ոլորտում իրենց օրենսդրությունների ներդաշնակեցում, իսկ վերջինս ավարտելուց հետո 2025թ. ստեղծել ֆինանսական շուկայի կարգավորման վերազգային մարմին, որի գտնվելու վայրը կլինի Ավստրիա քաղաքը: Այս դրույթում ևս հասկանալի չէ, թե հատկապես ֆինանսական որ շուկաների մասին է խոսք գնում:

Հատկանշական է, սակայն, որ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրում սահմանված են կոնկրետ ժամկետներ այլ շուկաների ստեղծման համար: Այսպես, Նախատեսվում է մինչև 2025թ. ստեղծել հետևյալ ընդհանուր շուկաները.

- ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկա (մինչև 01.07.2019թ.),
- գազի ընդհանուր շուկա (մինչև 01.01.2025թ.),
- Նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկա (մինչև 01.01.2025թ.):

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով նախատեսվում է նաև իրականացնել փոխարժեքային քաղաքականության համակարգում, որը պետք է ապահովվի առանձին մարմնի կողմից, որի կազմի մեջ պետք է մտնեն անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի ղեկավարները: Թեև ամրագրված է, որ նշված մարմնի գործունեության կարգը պետք է սահմանվի ԵԱՏՄ շրջանակներում միջազգային պայմանագրով, սակայն մինչ օրս անդամ պետությունների միջև նմանատիպ որևէ պայմանագիր դեռ չի ստորագրվել:

Արժույթային միության ձևավորման ճանապարհին կարևորելով փոխադարձ գործարքներում ազգային արժույթների լայնորեն օգտագործումը՝ հարկ է նշել, որ տարեցտարի աճում է ԵԱՏՄ երկրների միջև արտաքին առևտրային գործարքների գծով ազգային արժույթներով իրականացվող վճարումների ծավալը: Այդուհանդերձ 4-ից կարելի է փաստել, որ եթե 2013թ. այն կազմում էր 62.7%, ապա 2016թ.՝ արդեն իսկ 75.3%: Փոխադարձ վճարումներում երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցնում են ԱՄՆ դոլլարը (19.3%) և Եվրոն (5.2%): Ի դեպ, ԵԱՏՄ երկրների միջև ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գծով վճարումների արժույթային կառուցվածքում գերակշիռ տեղ է զբաղեցնում ռուսական ռուբլին՝ 74.1% կամ բոլոր ազգային արժույթներով իրականացնող վճարումների 98.4%-ը:

Աղյուսակ 4 .

ԵԱՏՄ անդամ պետությունների միջև ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գծով վճարումների արժույթային կառուցվածքը 2013-2016թթ. ընթացքում¹¹

Փոխադարձ վճարումները ԵԱՏՄ անդամ պետությունների միջև ¹²	2013	2014	2015	2016
հայկական դրամով	0.1	0.1	0.1	0.1
բելառուսական ռուբլով	0.4	0.3	0.5	0.4
Տենգետով	0.4	0.5	1.1	0.7
Սոմով	0.0	0.0	0.0	0.0
ռուսական ռուբլով	61.8	96.4	68.0	74.1
ԱՄՆ դոլլարով	30.3	26.3	25.0	19.3
Եվրոյով	6.8	5.2	5.1	5.2
այլ արժույթներով	0.2	0.2	0.2	0.2
Ընդամենը բոլոր արժույթներով	100.0	100.0	100.0	100.0
Ընդամենը ԵԱՏՄ անդամ պետությունների արժույթներով¹³	62.7	68.3	69.7	75.3

¹⁰ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր, Հավելված 15, [Էլեկտրոնային ռեսուրս]՝ աղբյուրը՝

<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95272> (մուտքի ամսաթիվ՝ 01.08.2017թ.)

¹¹ աղբյուրը՝

http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/express_information/Documents/ei_payments/express_payments_2016.pdf (մուտքի ամսաթիվ՝ 17.08.2017թ.)

¹² ԵԱՏՄ անդամ պետությունների ազգային դրամական միավորներն են՝ Հայաստան՝ ՀՀ դրամ, Բելառուս՝ բելառուսական ռուբլի, Ղազախստան՝ տենգե, Դոլղզստան՝ սոմ, Ռուսաստան՝ ռուսական ռուբլի

¹³ Հայաստանի Հանրապետության տվյալները ներառված չեն, քանի որ վերջինս ըստ արժույթների և երկրների ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գծով վճարումների վերաբերյալ տվյալներ չի մշակում

Նկատենք, որ ԵԱՏՄ շրջանակներում ռուսական ռուբլին օգտագործվում է հիմնականում Ռուսաստանի մասնակցությամբ երկրորդ գործարքների ժամանակ, իսկ Բելառուսի, Ղազախստանի, Չայաստանի և Ղրղզստանի միջև վճարահաշվարկային գործարքները կատարվում են առավելապես ԱՄՆ դոլլարով կամ եվրոյով: Աղյուսակ 5-ից ակնհայտ է, որ 2016թ. 4-րդ եռամսյակի ընթացքում ռուսական ռուբլին որպես վճարային միջոց ամենաշատն օգտագործվել է Բելառուսի կողմից Ռուսաստանի հետ իրականացվող փոխադարձ առևտրային գործարքներում, որին բաժին է ընկնում դեպի Ռուսաստան արտահանման գծով վճարումների 88.2%-ը և Ռուսաստանից ներմուծման գծով վճարումների 82.0%-ը:

Այսպիսով, մինչև միասնական հաշվարկային միավորի ներմուծումը որպես ԵԱՏՄ անդամ պետությունների միջև կատարվող գործարքների ժամանակ ծագող արժույթային ռիսկի զգալի կարևորագույն մեխանիզմ՝ կարող է հանդես գալ փոխադարձ հաշվարկներում ազգային արժույթների օգտագործումը: Այն դրական կարող է ազդել հատկապես անդամ պետությունների միջև վարկային հարաբերություններում պարտավորությունների մարման ժամանակ առաջ եկող արժույթային ռիսկի նվազման վրա: Նշվածից կարելի է եզրակացնել, որ ԵԱՏՄ-ում արժույթային միության ձևավորման նախապայմաններից մեկն էլ պետք է հանդիսանա միասնական վճարային համակարգի ստեղծումը, որտեղ որպես փոխադարձ վճարային միջոց կօգտագործվեն բացառապես ԵԱՏՄ անդամ պետությունների ազգային արժույթները:

Աղյուսակ 5.
ԵԱՏՄ անդամ պետությունների միջև 2016թ. 4-րդ եռամսյակի ընթացքում ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գծով վճարումների արժույթային կառուցվածքը՝ ըստ ԵԱՏՄ անդամ պետությունների արժույթների¹⁴
%

Վճարումներ	դեպի Բելառուս հետևյալ երկրներից				Բելառուսից դեպի հետևյալ երկրներ			
	Չայաստան	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան	Չայաստան	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
հայկական դրամով	-	-	-	-	-	-	-	-
բելառուսական ռուբլով	0.4	0.6	0.1	0.5	0.1	1.6	2.3	0.6
Տենգետով	-	0.4	-	-	-	0.6	-	-
Սոմով	-	-	-	-	-	-	-	-
ռուսական ռուբլով	25.8	42.5	13.6	88.2	11.2	18.9	3.7	82.0
ԸՆդամներ	26.2	43.5	13.7	88.8	11.3	21.1	6.0	82.6
Վճարումներ	դեպի Ղազախստան հետևյալ երկրներից				Ղազախստանից դեպի հետևյալ երկրներ			
	Չայաստան	Բելառուս	Ղրղզստան	Ռուսաստան	Չայաստան	Բելառուս	Ղրղզստան	Ռուսաստան
հայկական դրամով	-	-	-	-	-	-	-	-
բելառուսական ռուբլով	-	-	-	-	-	-	-	-
Տենգետով	-	0.6	3.0	1.2	-	0.7	5.0	0.6
Սոմով	-	-	3.3	0.0	-	-	1.3	-
ռուսական ռուբլով	0.4	1.9	0.0	75.4	-	27.8	0.1	73.6
ԸՆդամներ	0.4	2.5	6.4	76.6	0.0	28.5	6.3	74.2
Վճարումներ	դեպի Ղրղզստան հետևյալ երկրներից				Ղրղզստանից դեպի հետևյալ երկրներ			
	Չայաստան	Բելառուս	Ղազախստան	Ռուսաստան	Չայաստան	Բելառուս	Ղազախստան	Ռուսաստան
հայկական դրամով	-	-	-	-	-	-	-	-
բելառուսական ռուբլով	-	-	-	-	-	-	-	-
Տենգետով	-	-	16.3	0.3	-	-	18.6	0.0
Սոմով	-	-	-	-	-	-	-	-
ռուսական ռուբլով	-	7.9	0.3	64.1	-	12.5	1.0	56.1
ԸՆդամներ	0.0	7.9	16.6	64.4	0.0	12.5	19.6	56.1
Վճարումներ	դեպի Ռուսաստան հետևյալ երկրներից				Ռուսաստանից դեպի հետևյալ երկրներ			
	Չայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Չայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան
հայկական դրամով	2.6	-	-	-	1.9	-	-	-
բելառուսական ռուբլով	-	0.6	-	-	-	0.2	-	-
Տենգետով	-	-	3.1	-	-	-	2.6	-
Սոմով	-	-	-	1.8	-	-	-	1.2
ռուսական ռուբլով	46.6	78.6	61.5	42.4	68.6	89.1	60.9	57.9
ԸՆդամներ	49.2	79.2	64.5	44.2	70.5	89.3	63.5	59.1

Այսպիսով, կարծում ենք, որ ԵԱՏՄ-ում լիարժեք արժույթային միության ձևավորմանը կարելի է հասնել փուլային եղանակով: Առաջին փուլում անհրաժեշտ է ավարտին հասցնել անդամ երկրների արժույթային և դրամավարկային քաղաքականության կոորդինացման աշխատանքները՝ այդ ընթացքում փոխադարձ հաշվարկներն ու վճարումներն իրականացնելով անդամ երկրների ազգային արժույթներով և ձևավորելով միասնական վճարային համակարգ: Երկրորդ փուլում արժույթային զամբյուղի մոդելի հիման վրա պետք է ներդնել միասնական հաշվարկային միավոր՝ բացառապես անդամ երկրների միջև միջազգային հաշվարկներում անկանխիկ եղանակով օգտագործելու նպատակով: Միասնական հաշվարկային միավորի նկատմամբ ազգային արժույթների փոխարժեքները պետք է ունենան տատանումների խիստ սահմանափակ

¹⁴ աղբյուրը՝ http://eec.eaunion.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/fin_stat/stat_tables/Pages/default.aspx (մուտքի ամսաթիվ՝ 17.08.2017թ.)

շրջակայք: Այս դեպքում հաշվարկային միավորի Եմիսիայի համար անհրաժեշտություն կառաջանա ձևավորել հատուկ վերաբերական մարմին, որը կվերահսկի նաև միասնական հաշվարկային միավորի նկատմամբ ազգային արժույթների փոխարժեքների ֆիքսված մակարդակից շեղումները: Միասնական հաշվարկային միավորի կիրառումը հնարավորություն կտա նաև տնտեսավարող սուբյեկտներին նվազեցնել արտաքին տնտեսական գործարքների ժամանակ առաջացող արժույթային ռիսկերը և կրճատել գործառնական ծախսերը: Երրորդ փուլում ազգային արժույթներից հրաժարման և միասնական արժույթի ներդրման մասին հնարավոր է խոսել միայն այն դեպքում, երբ ԵԱՏՄ-ում կատարելապես գործի ընդհանուր շուկան, իսկ անդամ երկրներն ունենան տնտեսական աճի համաչափ և կայուն տեմպեր:

*Ներկայացվել է 18.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.*